



և նոյն է, մենք կը գրենք և երբ կիմանանք ըստ  
լոր փաստերը, այն ժամանակ արդէն կարգադրու-  
թիւն կանանք»:

Մի ամիս կանցնի մինչև որ թարգմանի մատնա-  
ցոյց արած տեղի իշխանութիւնները կը ստանան  
յանձնաժողովի հարցապնդումը, մի ուրիշ ամիս,  
մինչև որ նրանց պատասխանը կը ստացվի և,  
Պօլիս Զմեռը այդ ժամանակամիջոցը աւելի էլ  
կը ձգձգվի, զոնէ երեք ամսով, հաղորդակցու-  
թեան ճանապարհներէ դժուարութեան պատճա-  
ռով: Մինչդեռ թարգմանի անորոշ ժամանակով  
յետաձգված յայտարարութիւնը բնականաբար կը  
կորցնի իր ոյժը և նշանակութիւնը, և այդպիսով  
չափ հարցեր, որոնք անյայտ լուծումն են  
պահանջում, կը յետաձգվեն, մինչև որ ժամանակը  
իւր ամեն բան հարթող ներգործութիւնը չի անի:

«Ինչ կարող են պետութիւններն անել այդպիսի  
պայմաններում: Ինչպէս կարող են փոխել այդ  
իրական նշանակութիւն տալով լեքսիկոններ  
վերին Նրանց բոլոր ջանքերը անպատճառ կը  
զիպեն և կը ջախջախեն այն պատէքարի վրա,  
որը ներկայ դէպքում ներկայացնում է թիւրքաց  
վարչութիւնը, մի և նոյն է նրա մէջ լեքսիկոններ  
կը կատարվեն, թէ ոչ»:

ՀԱՅՈՑ ՀԱՐՅԸ ԵՒ ԴԻՊԼՈՄԱՏԻԱ

I ԶԷ յԺՈՒՆԻ ԱՆԿՔԸ

Ռուսաց գործակալութիւնը արդէն հաղորդեց  
մեզ, որ Զէյթունի հայերը յաղթել են թիւրք  
զինուորներին: Այդ առիթով անգլիական «Daily  
News» լրագրին հաղորդում են, որ պաշարված  
զինուորների թիւը եղել է 400, մի գնդապետի ա-  
ռաջնորդութեամբ: Մարաշի հայերը սպասում են  
Զէյթունից մի նշանի, որ իրանք էլ միանան ասլը-  
սամաններին:

II ՎԱԼԻԻ ՀՈԳԱԿՈՂՈՒԹԻՒՆԸ

Թիւրքաց պաշտօնական աղբիւրներից հաղոր-  
դում են, որ Էրզրումի վայրէջքում, որ քիւրդ  
հրոսակներ զիտաւորութիւն ունեն յարձակվել  
Չաշի հայերի վրա (Գրիգի մի ժամ հեռու), կար-  
գադրել է, որ տեղական զինուորների և պահա-  
կաւորի միջոցով քիւրդական շարժումները ա-  
ռաջն առնվի:

III ԴԻՍԿԱՆԻ ՌԱՍԱՍՏԱՆԻՆ

Անգլիական «Daily News» լրագրում կարդում  
ենք, որ Անատոլիայի հայերը պատարաստվում են  
պատգամաւորներ ուղարկելու և, Պօլիս ուսանող  
զեւական Ներքիզովն ինգլիզերէն ուսուցող թագաւո-  
րի պաշտպանութիւնը և նոյն իսկ երկրի ժամա-  
նակաւոր գրաւումը: Հայ հոգեւորականութիւնը  
զիտաւորութիւն ունի զինել քրիստոնէական ըս-  
տիկ եկեղեցիներին, ինքնակամ նրանց պաշտպա-  
նութիւնը:

IV ԲՈՂՈՔԱԿԱՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ

Ամերիկական և անգլիական ղեկավարները,

կանգնում, և միայն այստեղ կառքերը, որոնց  
թիւը հասնում է այժմ մինչև 60-ի: Միայն այս-  
տեղ եւ ասում, որովհետեւ քաղաքի ոչ մի ուրիշ  
մասում, ոչ ծովափնային, զէթ չողեւանների ե-  
կած ժամին և ոչ էլ որ և է այլ բազմամարդ  
տեղում ազատ կառքեր կարելի չէ գտնել:  
Այստեղ է մարդ ուղարկել ամբողջ 15—20 վայր-  
կան հեռաւորութիւնից, որ կառքը գալ, եթէ  
մարդ չէ ուզում անձամբ երթալ մինչև հրա-  
պարակը և այն ժամանակ արդէն էլ հալկաու-  
րութիւն չը կայ կառքի: Բոլոր չուկան, չար-  
սիւն, հայ և յոյն վաճառականների կենտրոնա-  
տեղին է, այստեղ են բոլոր մեծ վաճառատուն-  
ները, բոլոր չղեկներն ու գործակալութիւնները,  
ոստիկանութեան պաշտօնարանը, օսմանեան  
բանկի բաժինը և այլն:

Շուկայի աջ ու ձախ կողմերին, նոյն երկա-  
րութեամբ փողոցներ կան, վերին աստիճանի  
անկանոն ուղղութեամբ, մանուածապատ և մեծա-  
դոյն մասը մինչև այն աստիճան նեղ, որ երկու  
մարդ չը կարող հաղիւ կարող են անցնել, միայն  
թէ առհասարակ բոլորն էլ քարած են:

Զուռնական թաղում, մասամբ և հայկականի մէջ,  
աներկ փողոցներ են չինված և փողոցի եր-  
կարութեամբ երկու կողմը ահագին պատեր են  
կանգնած, այնպէս որ այդ տեղերում մարդ  
միշտ երկու բարձր պատերի միջով է անցնում,  
առանց տներէ երես տեսնելու: Այս արդէն բա-  
ւական ասպնոց է, թէ քրիստոնէաները ինչ  
աստիճանի ասպնոյ էին զգում իրանց անեղում:

զիմել են թիւրք կառավարութեան, պահանջելով  
ապահովութիւն իրանց քարոզիչների համար,  
որոնք զանգաւորում են թիւրք ֆանատիկոսների  
վրա: Բուլանդում և խարբերում թիւրքերը  
սկսել են կոտորել քրիստոնէաներին և մեռցրել  
են բողոքականների քահանային:

V ՔՐԷՐԸ ԼԱՆԴԻ ԱՆԿՈՒՄԸ

Ամերիկայի Միացեալ Նահանգների կառավա-  
րութիւնը, հասարակական կարծիքի ազդեցու-  
թեան տակ, յետ կանչեց նաւապետ Քրէքլան-  
զին, որ պատերազմական նաւերով կանգնած էր  
Փոքր-Ասիայի ափերում՝ քրիստոնէաներին պաշտ-  
պանելու նպատակով: Քրէքլանդը փոխանակ ի-  
րան տուած պատուէրը կատարելու, զբաղված  
էր թիւրքերին գովելով:

VI ԿԱՌԱՐԵԱԼ ՀԱՄԱԵՐԱՅԻՆՈՒԹԻՒՆ

«Times» լրագիրը հաղորդում է, որ պետու-  
թիւնները կատարեալ համերաշխութիւն են ցոյց  
տալիս այն ամեն բանում, ինչ որ վերաբերում  
հայոց հարցին:

VII ԸՆԴՀԱՆՈՐ ԺՐԱԳԻՐ

«Kölnische Zeitung» լրագիրը հաղորդում է,  
որ Կ. Պօլսում, պետութիւնների ներկայացուցիչ-  
ները մշակեցին գործունէութեան մի ընդհանուր  
ծրագիր՝ ասպաղջ բարդութիւնների առաջն առ-  
նելու համար Արեւելքում:

VIII ԱՆՈՒՄՆԵԼԻ ԴԵՐՈՒԹԻՒՆ

Կ. Պօլսից հաղորդում են անգլիական լրագիր-  
ներին, «Կիւլոմատիական կորպուսը իր ամբողջ  
կազմութեամբ այստեղի դրութիւնը անտանելի է  
համարում: Սուլթանը ստիպված է լուել, տեսնե-  
լով պետութիւնների համերաշխութիւնը, որոնք  
բոլորն էլ տալիս են բարեկամական, բայց անա-  
խորժ խորհուրդներ, նրանցից ոչ մէկը ետաք  
զիտաւորութիւններ չէ արտայայտում: Սուլթանի  
միակ պատասխանը լեքսիկոնների նախագիծը ոչ ըն-  
չացնելու համար այն է, որ նա վերահսկող յանձ-  
նաժողովում նշանակեց պաշտօնի երկու սիրելիներ-  
ին, որոնցից մէկը յանձնաժողովի նախագահ է»:

IX ՔԵՄԱԼԻՎԻԱՆՆԵՐԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ

Կ. Պօլսից հեռագրում են, «Քեմալի-փաշային  
մեծ վիդիերի պաշտօնից արձակելու իրադէն գըր-  
ված է Քեմալիի համար վերադարձան խօսքերով  
Այդ նրանով է բացատրվում, որ Քեմալիը հրաժար  
վեց պաշտօնում մնալ, որպէս զի այլ ևս չը ծածկի  
սուլթանի կեղծ վերաբերմունքը հայկական լեքսի-  
կոնների ծրագրին: Քեմալի-փաշան, պաշտօնից ար-  
ձակվելուց մի քանի օր առաջ, երկու անգամ  
հրաժարական տուեց: Քեմալի փաշայի արձակման  
պատճառը այն խառնակութիւններն էին, որ  
տեղի ունեցան Փոքր-Ասիայում, նոյնպէս ղեկ-  
ւարների արած առաջադրութիւնները, և այն ձեռ-  
նարկները, որ նա ունէր, իր իշխանութիւնը ըն-  
դարձակելու համար»:

—Փողոցներից ամենաերկարն է «Ռեզն-Սօխալ»  
կոչվածը, որ համեմատելով կողմնակի փողոցնե-  
րին, քիչ աւելի լայն է: Այստեղ էլ կան թէպէտ  
խառնութիւններ, բայց մեծ մասը բնակարան է: Այս  
փողոցի վրա են հիւպատոսներից ոմանք (ինչ-  
պէս բեղիկակալներ), Քրանսիական ՓրէրնեՐԻ  
դպրոցը (Frères de la Doctrine chrétienne), հայ-  
կաթողիկոսաց առաջնորդարանն ու եկեղեցին և  
այլն: Իսկ լուսաւորչական հայոց առաջնորդարա-  
նը մեծ չուկայի վրա է, իր ետև ունենալով մի  
կողմնակի փողոցում, աղայոց դպրոցը և քիչ ա-  
ւելի վեր՝ աղվանաց: Այս կողմերումն են նաև  
միւս հիւպատոսարանները՝ ուսուց, Քրանսիա-  
կան և այլն:

Առաջնորդարանի գրեթէ հանգէպ, մի բաւա-  
կան լաւ ազգային չէպը կայ, որ պատիւ է բե-  
րում Տրապիզոնի հայերին, բայց այժմ մեռելու-  
թեան է զատապարտված: Այստեղ նախ հին ե-  
կեղեցի էր, որը քանդվելով՝ նրա տեղ երկայրկա-  
նի ընդարձակ շինութիւն են կառուցել, ներքը  
խառնութիւն, իսկ վերը հայկապէս կլուսւ:  
Նա այս կլուսն իրօք մեծ յարգանք էր գտել և  
եւրօպացի ոչ միայն հայոց, այլ նաև յուսաց և  
կար քաղաքի մէջ, չը նայելով որ հայերը Տրա-  
պիզոնում փառաբանութիւն են կառնում: Բայց  
ահա 6—7 տարի է արդէն, որ կառավարութիւ-  
նը փակել է, հայերի համախմբումն արգելելու  
նպատակով:

Տրապիզոնը բաժանված է երկու մասի, մի մեծ

X ՄԵԾՎԻԴԻՐ ՐԻՖԱՏ-ՓԻԱՆ

Նոր մեծ վիդիւր Րիֆատ փաշան, լրագիրների  
խօսքով, առաջ պատկանում էր Միդհաթ-փաշայի  
կողմնակիցների թւին: Նա փորձված և ընդունակ  
սովորաբար ամբար ամացաւ, բայց չունի  
այն ազդեցութիւնը, որ ունէին Սաիդ և Քեմալի-  
փաշաները: Հեռանալով Միդհաթից, նա Վիդի-  
նի նահանգապետ նշանակվեց և ապա վարեց վար-  
չական զանազան բարձր պաշտօններ: Րիֆատ-  
փաշայի նշանակումը, ինչպէս կարծում են, ա-  
ռանձին հետեանքներ չի ունենաց:

XI ՇԱՔԻՐ-ՓԻԱՆՆԵՐԻ ՍՊԱՍԻԱՆԸ

Թիւրքաց գլխաւոր կոմիտարը՝ հայկական լե-  
քսիկոններ մտցնելու համար, հռչակաւոր Շաքիր  
փաշան, այս օրերս մի հետաքրքիր զեկուցում  
է ուղարկել Բ. Գրանը: Նրան հարցրին թիւրքաց  
միլիտարները՝ թէ կարելի է արդեօք զինաթափ  
անել քիւրդերին: Նա պատասխանեց, «Կարելի է,  
բայց դրա համար պէտք է 100,000 մարդուց  
բաղկացած մի զօրք ուղարկել Փոքր-Ասիա»:

XII ՔԻՐԻՍՏՈՆԵԱՆԵՐԻ ԿՈՏՈՐԱԾ

«Kölnische Zeitung» լրագրի Կ. Պօլսի թղթա-  
թանկիցը հաղորդելով թիւրքերի և հայերի մէջ  
տեղի ունեցած ընդհարումների մասին, Էրզրումում  
և Փոքր Ասիայի ուրիշ կէտերում, ասում է, որ  
առաջին թիւրքերը գլխաւորապէս յարձակվում  
են հայերի վրա, բայց եթէ գործերի մի այդպի-  
սի դրութիւն կը շարունակվի՝ նոյն վիճակին  
կենթարկվին բոլոր քրիստոնէաները, առանց  
դաւանութեան խտրութեան»:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱՐՄԱՆԻՅՑ

Հովանքների 26-ին

Աստուածանի թեմում հայոց թեմական դպրոց  
հիմնելու հարցը սրանից մի քանի ամիս առաջ  
մեծ աղմուկ բարձրացրեց: Պատգամաւորներ,  
ժողովներ, տաք վիճաբանութիւններ, քուէար-  
կութիւն, լրագրական յղուածներ,—մի խօսքով  
այդ կարծիք հարցը լուրջ գործ համարվելու ա-  
մեն նշաններն ունէր:

Սակայն ահա անցնում են ամիսներ, և այդ  
հարցի առիթով ոչինչ չէ լսվում: Ինչ վախճան  
ունեցաւ այդ հարցը, ինչ վիճակ, Աստուածա-  
նոմ թէ Արմաւիրում պէտք է բացվի ապագայ  
թեմական դպրոցը: Գործադրաբար, այդ ոչ ոք  
չը գիտէ: Արմաւիրիցը համոզված են, որ այդ  
հարցը յօդուտ Արմաւիրի լուծվեց, բայց նոյնը  
ասում են և աստուածանիները, և այդպէս, իւ-  
րաքանչիւրը այդ երկուսից հարցը արդէն լուծ-  
ված համարելով՝ սուս ու փուս նստել է և  
կարծէք սպասում է, որ մի անեկոյթ ձեռք  
յայտնվի և կարգադրի ապագայ դպրոցին վերա-  
բերեալ գործերը:

Ճորով, որի վրա 2 կամուրջ կան չինած: Մեր  
նկարագրած մասը, որ իբրեւ քրիստոնէաների  
վաճառականութեան կենտրոն է, ճորի ձախ  
կողմն է (ծովից դիտելով), իսկ աջ կողմը  
բացառապէս թիւրքեր են բնակվում, թէև ձախ  
կողմի մէջ էլ կան մի քանի թիւրք թաղեր,  
որոնց մէջ խառն են նաև քրիստոնէաները:  
Թիւրքերն իրանց բնակավայրերը ընտրած են  
Տրապիզոնի երկու թեմերը՝ կենտրոնը թողնելով  
յուսաց և հայոց: Չորի ու կողմն է սարայը՝  
տեղական կուսման համեմատ, այսինքն կառա-  
վարութեան պաշտօնաւորանը, որ մի և նոյն չէն-  
քին մէջ հաւաքված են՝ վալին և իր ղեկանա-  
տունը, դատարանները և ոստիկանութիւնը: Քա-  
ղաքի այս աջ մասում, ճորի եզերքի վրա մինչև  
հիմա էլ մնում են բարձր պատեր, որոնք կազ-  
մում էին երբեմն քաղաքի միջնաբերդը, (ցիտա-  
ղէլ), որ գլխաւորապէս Յուստինիանոս կայսրի  
ժամանակ է կառուցված:

Միջնաբերդի մէջն են վերոյգրեալ կառավար-  
չական հիմնարկութիւնները, և բայց դրանցից  
այնտեղ կան նաև երկու բաղնիք և մի մզկիթ  
Սարձի-Զիւսար անունով, որ նախնապէս յու-  
նական եկեղեցի էր, նոյնպէս Յուստինիանոսից  
չինված: Միջնաբերդը չորս դուռ ունի: Միայն  
այս մզկիթն է, որ եկեղեցուց է փոխարկված, այլ  
կան նաև երկու ուրիշը, մէկը քաղաքի ծայրին է,  
Պատմանայի ճամապարհի վրա և կոչվում է մին-  
չև հիմա Սեա-Սօֆիա, որը կառուցել է ըստ  
աւանդութեան՝ Ալեքսիս III Կոմնենոս, Տրապի-

Սակայն, որքան մեղ յայտնի է, այդ կարևոր  
հարցը մնաց առանց վճառի, որովհետև թեմի  
պատգամաւորների ձայնը հաւասար բաժանվե-  
ցին թէ Արմաւիրի և թէ Աստուածանի համար, և  
այդ գործը նախաձեռնող խորէն եպիսկոպոս  
Ստեփանէն որոշ վճառ չէր յանգել, թէ որ քա-  
ղաքում կը հիմնվի դպրոցը: Անկասկած ենք, որ  
Աստուածանի թեմի նոր առաջնորդ Արիստակէս  
արքեպիսկոպոս Սեդրակեան վերջ կը դնի այդ  
անորոշութեանը, կամ նորից այդ հարցը դար-  
թեցնելով, կամ թէ հիմնվելով անցեալ ժողով-  
ների վճիռների վրա: Արմաւիրցիները զոնէ ան-  
համբեր սպասում են այդ խնդրի օր առաջ  
լուծմանը, ի հարկէ, յօդուտ Արմաւիրի:

Ա. Աթմասեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Երեսու, հովանքների 19-ին

Կովկասի Բարեգործական Ընկերութեան Երե-  
ւանի տեղական վարչութիւնը ինքրում է այս  
երկուսի մի անկիւն չորհրդէ «Մշակի» էջերում:  
Վարչութիւնն ստացաւ նուէրներ, — Սեդրակ Կա-  
ղանից՝ ի յիշատակ իր հօր՝ 50 բուլբուլ, այլի  
տիկին Սոփիայ Թադէոսեանից՝ ի յիշատակ իր  
ամուսնու և որդւո՝ 75 բ., քանաքեռցի Գէորգ  
Յարութիւնեանից, ի յիշատակ իր ամուսնու 25 բ.,  
և Մոսկվայի վաճառական Կարապետ Չաւա-  
րեանից 15 բուլբուլ:

Վարչութիւնն պատու ունի յարգելի նուիրա-  
տուներին հրապարակով իր խորին շնորհակա-  
լութիւնը յայտնելու:

Վարչութեան նախագահ՝

Գ. Տէր-Խաչատրեանց

Քարտուղար՝ Մ. Պանոսեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՊԻՍ

Կ. Պօլսից մեղ հաղորդում են, որ այնտեղի  
հայերի մէջ նկատվում է զիտաւորութիւն ղեմե-  
լու ուսուց կառավարութեան և ինքրելու, որ  
Ռուսաստանը իր հովանաւորութեան տակ վերց-  
նի թիւրքաց հայերին:

Մենք ստացանք Էրզրումից, Ղևոնդ եպիսկո-  
պոս Շիշմանեանից մի նամակ, հովանքների  
23-ից գրված, որի մէջ նկարագրում է Էրզրումի  
և չրջակայ գիւղերի հայերի ծանր վիճակը:

Այսօր, չաքաթ օր, նոյեմբերի 4-ին, երկրիս  
կառավարչապետի պալատում, ժամը 4-ին կէս-  
րից յետոյ պէտք է տեղի ունենայ կյուրերի  
ինամակալ հոգաբարձութեան հանդիսաւոր նիս-  
տը, կառավարչապետի ամուսնու նախագահու-  
թեամբ: Նիստին կարող են ներկայ լինել և  
կողմնակի անձինք:

զօնի թագաւորը: Այս եկեղեցին իբրեւ հնութիւն  
առաջարկվում է այցելել բոլոր օտարականնե-  
րին, նոյն իսկ թիւրքերի կողմից: Իսկ միւս  
մզկիթն է նախկին Ս. Եղիշեան, նոյնպէս յու-  
նական, որ կոչվում է Եէնի-Զուլա, (նոր  
ուրբաթ), որովհետև սուլթան Մէհմեդ II Ֆաթիհ  
(Կ. Պօլսն առնողը) Տրապիզոնը գրաւելու օրը  
այստեղ եկել իր առաջին նամակն է կատա-  
րել: Մի ուրիշ յուսական հնութիւն էլ քաղաքի  
ձախ կողմը կայ, Բօզ-Թէփէ կոչված բլուրի  
ետեղ, որ գուցէ թիւրք բնակութիւններից ունե-  
ցած հեռաւորութեան հնորիւ մինչև հիմա էլ  
մնայել է քրիստոնէութեան յիշատակաբան: Այս  
մի վանք է՝ կառուցված վերայիշեալ Ալեքսիս  
Կոմնենոսից, որին շնորհակալ զաւր փոքր-Ասիա-  
յի թագաւոր և կայսր է անուանում պա-  
տի վրա փորված մի յուսական հին արձանա-  
գրութիւն:

Այս վանքը, որ մինչև հիմա էլ ուխտատեղի  
է, փորված է ժայռի մէջ, վանքի մատուռը, գա-  
ւիթը և պատերը դեռ ևս պահում են հին նը-  
կարները, նոր կառակարանի դէպքերից առնված,  
և որոնց մէջ Քրիստոսի Աստուածածնին և Յովհ.  
Աւետարանչի պատկերներն են կան նաև Ալեք-  
սիս Կոմնենոսի, իր կնոջ՝ Թէօօրայի և իր մօր՝  
Իրէնայի պատկերները:

(Կը շարունակվի)



ՆԱՄԱԿ ՊԱՐԾԱԿԱՆՆԵՐ

Էնդէլի, հոկտեմբերի 20-ին  
Այստեղի հայոց դպրոցի սկիզբը դրվեց. այդ  
բանը մի տեսակ նախանձ շարժեց մի խումբ  
պարսիկ վաճառականների մէջ, որոնք նորայէս  
ցանկացան իրանց որդոց յանձնել այդ դպրոցը  
ուսանելու, սակայն մերժում ստացան: Մերժե-  
լու պատճառը այն էր, որ այս տարի դպրոցը  
մի ուսուցիչ աճի, որը և պարսպում է թէ տղա-  
ները և թէ օրիորդները հետ:

Պարսիկները խոստացան դպրոցի տարեկան  
ծախսը տալ, և հոգաբարձութիւնը խոստացաւ ա-  
ռաջիկայ տարվանից ձեռնարկել բանալու մի  
դպրոց՝ յատկապէս պարսիկ աշակերտների հա-  
մար և այդ էլ հոգաբարձութեան հակողութեան  
տակ: Յանկալի է այդ բանի աջողութիւնը: Լիա-  
նօգնանքը իր խոստացած դպրոցի կառուցման  
նախապատրաստութիւնը տեսնում է, և շուտով  
կը սկսվի շինութիւնը:

Մի գովելի միայն է յոյսերը մի խումբ հայերի  
մէջ, այն է հիմնել գրադարան-ընթերցարան,  
տաճարով լրագրիւնք և գրքեր:

Մի քանի պարսիկների ջանքով արձարծվում է  
պարսիկ ժողովրդի մէջ մի սեփական բժիշկ ու-  
նենալու գաղափարը: Որովհետև շատ շատերը  
անընդհատ և անտանելի տանջանքների են են-  
թարկւում այս և այն ինքնախոյ խաբեայ բը-  
ժիշկների ձեռքից, ուստի մի կրթված բժիշկ  
ունենալը շատերն են ցանկանում: Այդ նպատա-  
կով մտադրութիւն կայ իւրաքանչիւր անից տա-  
րեկան տուրք առնել և դրանով լրացնել բժշկի  
և դեղատան անհրաժեշտ ծախսերը:

Ս.

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

ԲԱՌՈՒՄ, 31 հոկտեմբերի: Հորոյի և Ռիօն  
գետերը յորդացան: Երկրորդու գիծը ջրի տակն  
է մնացել: Բաթումի շրջականներում հեղեղվել են  
գիւղերը, այգիները, սիւնիզորի դպարեր, ջուրը տա-  
րել է քաղաքային սպանդանոցները: Ազգաբնակի-  
ւթիւնը վնասվեց:

ՊԱՐԻՉ, 31 հոկտեմբերի: Ֆրանսիական նաւա-  
տորմը, բաղկացած չորս նաւերից, ծովապետ  
Ժերմէի առաջնորդութեամբ, գնաց դէպի Պերէյ:

ՄՈՍԿՎԱ, 2 նոյեմբերի: Յարեւմտականների և  
տեղեկակ անձանց խորհրդում վճռվեց հիմնել  
Մօսկվայում հայալին բօրսա:

ԺԻՏՈՒՐ, 2 նոյեմբերի: Խօյերան ամեն տեղ  
թուլանում է:

ԽԱՐԿՈՎ, 2 նոյեմբերի: Գաւառներում գետերը  
կանգ են առել:

ՊԱՐԻՉ, 2 նոյեմբերի: Մի անձն, կամենալով  
անյայտ մնալ, 100,000 ֆրանկ նուիրեց, որպէս  
զի կարծում է իրանք՝ ապակէգործները ապակէ  
գործարան կառուցանին:

ՎԻԷՆԱ, 2 նոյեմբերի: Լիւզէր երկրորդ ան-  
գամ բուրգօմիստը է ընտրված, որի պատճառով  
կառավարութիւնն արձակեց քաղաքային խոր-  
հուրդը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 նոյեմբերի: Պետական կա-  
լուածական բանկի գրաւական թղթերի գլխաւոր  
տոմսերն ընկել են:

| № սերիայի | № տոմսի | Գումարը    | № սերիայի | № տոմսի | Գու-<br>մարը |
|-----------|---------|------------|-----------|---------|--------------|
| 3.081     | 25      | 200.000    | 11.837    | 43      | 2            |
| 10.025    | 39      | 75.000     | 3.584     | 19      |              |
| 8.599     | 32      | 40.000     | 11.413    | 38      | 3            |
| 11.183    | 47      | 25.000     | 3.959     | 41      |              |
| 14.792    | 11      | 10.000     | 6.030     | 22      | 4            |
| 169       | 26      | 10.000     | 9.339     | 32      |              |
| 3.686     | 17      | 10.000     | 1.969     | 5       | 5            |
| 1.172     | 32      | 8.000-ական | 14.886    | 43      |              |
| 11.765    | 48      |            | 14.018    | 41      | 6            |
| 2.305     | 23      | 5.000-ական | 13.660    | 43      |              |
| 2.433     | 26      |            | 4.079     | 10      | 7            |
| 9.590     | 36      |            | 2.970     | 3       |              |
| 8.058     | 8       | 5.000-ական | 11.594    | 25      | 8            |
| 14.339    | 13      |            | 8.961     | 29      |              |
| 9.191     | 39      | 5.000-ական | 7.864     | 34      | 9            |
| 6.595     | 6       |            | 7.830     | 35      |              |
| 2.075     | 18      | 5.000-ական | 3.530     | 11      | 10           |
| 10.443    | 17      |            | 4.819     | 10      |              |
| 4.513     | 7       | 5.000-ական | 2.743     | 47      | 11           |
| 10.679    | 22      |            | 15.295    | 37      |              |

Խմբագիր՝ ԱԼԷԿՍԱՆԴՐ ԲԱՆԴՍՈՒՐ  
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԵԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ԱՐԲՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԻՄ

Երեքշաբթի, նոյեմբերի 7-ին

Ի ն պ ա տ

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ռուսաց օպերային խումբը կը ներկայացնէ

ՀՈՒԳԵՆՈՏՆԵՐ

Օպերա 4 գործ. երաժշտ. Մէյքերբերի

Մանակցում են տ.տ. Լինկոլնս, Մարչատ. պ.պ.

Օտորոլիդով, Կրուզով և այլն:

Տոմարները և լիբրետոն վաճառվում են ըն-  
կերութեան գրասենեակում (Сергиевская ул. д.  
Алиханова № 16) և ներկայացման օրը թատրո-  
նի կասսայում:

Սկիզբն է ժամը 8-ին

(№ 127) 1—2

Դ Ր Օ Շ Ա Կ

Թարգմանութիւն

Գէորգ քահ. Մկրտումեանի

Գինը 8 կօպէ:

Դիմել կենսարօնական վաճառանոց

(№ 127) 1—5

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՌՈՐ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամէն օր, բացի

կիրակի օրերից:

ԱՌԱՌՈՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ—11—12 ժ. վիրաբու-

ժութեան, սիֆիլիս և վէներական հիւանդու-

թիւնների:

Գ. Գ. ՋԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին

և նեարդային:

Կին-բժիշկ Ա. Ի. ՍՈՐՈԿԻՆԱ—ՇԱՐԲԻՆԻՆԱ—

10—11 ժ. կանանց և ներքին:

Ի. Ֆ. ՊՐՈՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կո-

կորդի, քթի և կրծքի:

Երկուշաբթի, չորեքշաբ-

թի և ուրբաթ:

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—12—1 ժ. ներքին, երե-

կայոց և նեարդային:

Երեքշաբթի, հինգշաբթի

և շաբաթ:

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1 1/2 ժ. ներքին և երե-

կայոց:

ԵՐԵՎԱՆԵՐԸ՝

ՊՐՈՏԱՍԵՎԻՉ—5—6 ժ. երեքշ. հիւնդ. և շա-

բաթ:

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. երկուշաբթի,

չորեքշաբթի և ուրբաթ:

Ա. Գ. ԳՈՒՂԻՆ—6—7 ժ. Սիֆիլիսի, մէղի և

ոնոակայն օրգանների:

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ—6 1/2—7 ժ.

Ա. Գ. ԳՈՒՂԻՆ քիմիական և խոշորացուցական

հետազոտութիւններ է անում մէղի, խիւի, ա-

րեան, կաթի և այլն:

Վճար 50 կ: Համախորհրդի (կոնսիլիումի) և

օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ՝

բժշկապետ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ

ՄԱՆԳԼԻՍԻ եկեղեցական-ծխական

դպրոցին կից ցանկանալով հիմնել ԳՐԱԳԱ-

ՐԱՆ, խոնարհաբար խնդրում եմ յարգելի

Թարգմանիչներից, հեղինակներից և զորո-

ւներից՝ նուրիշ իրանց գրաւածներից մի-մի

օրինակ՝ Հասցէն՝ Манглиць, учителю

Николаю Давтянъ. (№ 117) 2—6

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ցանկանում է

ունենալ հայերէն մասնաւոր դասեր: Պատ-

րաստում է հայ դպրոցների համար: Աւար-

տել է Ներսիսեան դպրոցը: Դիմել էժանա-

զին գրադարան:

(№ 123) 2—2

ԲԺՇԿԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԱՐԱՆ

ԴՕԿՏ. Ա. ԲԱՐԱՅԵԱՆԻ

Սերգիեվսկայա փողոց № 14.

Ցերեկը 12 1/2—2 ժ. կանաչք և մանուկներ:

Երեկոյան 6—7 1/2 ժ. տղաքի:

Ներքին և օդային հիւանդների համար, բացի

դեղերից, գործադրում են նաև զանազան տե-

սակ ջրա-էլէքտրա-բուժական և այլ ֆիզի-

կական մեթոդներ (մասսաժ և այլն)

(№ 124) 3—15

ՄԵԾ ԱՐԺԱՆԱՐՈՒԹԵԱՆ

ՀՈՏԱԼԷՏ ԶՐԵՐ

«Պարսկական Եասաման»

Մաղկահոտ 0-դէ-կօլօն

«Պարսկական Եասաման»

Հոտաւէտ Զրեր «Պարսկական Եասաման»

Սապօն «Պարսկական Եասաման»

Պօմադա «Պարսկական Եասաման»

Ընկերութիւն

ԲՐՈԿԱՐ ԵՒ ԸՆԿ.

Պրէյս-կուրանտը ձրի:

(ամ. 30) (№ 73) 6—12

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅ-ՀՈԳԵՆՈՐԱԿԱՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԳԱՆՁԱՐԱՆԻ ՎԱՐՁՈՒ-

ԹԻՒՆԸ յայտնում է հոգեւորականներին և աշխարհականներին, որ ն ոյ ե մ ե ռ ի 5-ին,

կ ի ը ա կ ի օ Ր, սուրբ պատարագից յետոյ, վանքի մայր եկեղեցում կատարելու է ՀՈ-

ԳԵՀԱՆԳԱՍՏԵԱՆ ՊԱՇՏԱՄԱՆ ԿԱՐԳ ԳԱՆՁԱՐԱՆԻՍ ՆՈՒԹԻՐԱԲԵՐՈՂՆԵՐԻ ՅԻՇԱՏԱԿԻ ՀԱՄԱՐ

և կարգացվելու է ընծայարկողների անուանացուցակը:

1—1 Նախագահ՝ Գրիգոր աւագ քահ. Տէր-Բարսեղեանց

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7

7—7